

**Հասմիկ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**  
Երևանի պետական համալսարան

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԵՎ  
ՄԵԿՆՈՂԱԿԱՆ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՈՐՈՇ  
ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ**

Սույն հոդվածում քննության են առնվում արդի թարգմանաբանության առավել հայտնի մեկնողական, մեկնողական-փիլիսոփայական որոշ տեսություններ, որտեղ թարգմանությունը գերազանցապես դիտարկվում է որպես գործընթաց: Հոդվածի նպատակն է արժևորել այդ տեսությունների դերը արդի թարգմանաբանական մտքի զարգացման մեջ: Առանձնահատուկ անդրադարձ է կատարվում հայտնի թարգմանաբան Լ. Վենուրիի՝ թարգմանչի «տեսանելիության» մասին գաղափարներին, որն այսօր թարգմանության տեսության մեջ դարձել է բուռն քննարկումների առարկա:

**Բանալի բառեր.** թարգմանաբանություն, մեկնողական տեսություն, մեկնողական-փիլիսոփայական տեսություն, ապակառուցողականություն, համարժեքություն, թիրախ մշակույթ

Արևմտաեվրոպական թարգմանաբանության մեջ անցած դարի 80-ական թվականներին առանձնապես կարևորվում են Ջ. Հոլմսի տեսական հիմնարար դրույթները, որը թարգմանության տեսությունը դիտարկում է որպես անկախ գիտակարգ և առանձնացնում երեք ճյուղ՝ տեսական, նկարագրական և կիրառական: Այդ ժամանակներից ի վեր ձևավորվել են նաև թարգմանական ուսումնասիրությունների երեք տարբեր մոտեցումներ՝ թարգմանությունը կարելի է քննել որպես *արդյունք*, *գործառույթ* և *գործընթաց*:

Թարգմանության մեկնողական, մեկնողական-փիլիսոփայական տեսություններում թարգմանությունը գերազանցապես դիտարկվում է որպես գործընթաց (Ժ. Դելիլ, Դ. Սելեսկովիչ, Մ. Լեդերեր, Ջ. Սթայներ, Է. Օրտեգա Արխոնիլյա, Լ. Վենուտի, Մ. Վիդալ Կլարամոնտե և այլք):

Իր՝ «Խոսքի վերլուծությունը որպես թարգմանական մեթոդ» աշխատության մեջ Ժան Դելիլը թարգմանական գործունեությունը համարում է կրկնակի մեկնաբանության արդյունք. առաջինը հիմնվում է բնագրի լեզվի, իսկ երկրորդը՝ թարգմանող լեզվի նշանների վրա, իսկ իմաստը այս կրկնակի մեկնաբանության միակ նպատակն է: Կարևորելով համեմատական մեթոդի դերը լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրություններում՝ Ժ. Դելիլը գտնում է, որ համեմատաբան-ոճաբանի նպատակը զուտ նկարագրական, նորմատիվ է, մինչդեռ թարգմանչինը՝ մեկնողական, հաղորդակցական: Ահա թե ինչու թարգմանության տեսությունը պետք է հիմնվի մի քանի կարևոր սկզբունքների

վրա. թարգմանության հիմնական նպատակը տվյալ ասույթի իմաստի բացահայտումն է և հաղորդումը՝ իմաստի քննությունը կատարելով բացառապես խոսքի, այլ ոչ թե լեզվի մակարդակում և հաշվի առնելով թարգմանական գործունեության դինամիկան, այլ ոչ միայն պարզապես նրա արդյունքը /Delisle, 1980: 84-94/:

Թարգմանության մեկնողական տեսության հայտնի ներկայացուցիչներ Դ. Սելեսկովիչը և Մ. Լեդերերը «Մեկնաբանել՝ թարգմանելու համար» աշխատության մեջ, հիմնվելով բանավոր թարգմանության իրենց մեծ փորձի վրա, քննում են թարգմանության գործընթացը լուսաբանող հիմնարար խնդիրներ: Դ. Սելեսկովիչը պնդում է, որ խոսքի դիֆին համընթաց կատարվող թարգմանությունն ի ցույց է դնում երկու տարբեր տարրերի մշտական փոխազդեցությունը. մեկը՝ բառային ու քերականական, իսկ մյուսը՝ գաղափարային, այսինքն՝ ոչ խոսքային: Ըստ այս հեղինակի՝ իմաստն ու նրա հաղորդումը լեզվի գոյության նախապայմաններն են, հետևաբար խոսքի ակտը պետք է նախորդի նորմի հասկացությանը, որի գոյությունը հաղորդակցության առաջնային պայմանը չէ, այլ նրա գործիքը. այն լեզվի գործածության արդյունքն է, որը ձևավորվել է դարերի ընթացքում՝ ենթարկվելով խոսողի ազդեցությանը: Դ. Սելեսկովիչը սահմանազատում է հաղորդակցության երեք փուլ. 1) իմաստի փուլը, երբ խոսողը ցանկանում է որևէ բան հաղորդել, իսկ ընդունողը լսում է՝ այն ըմբռնելու մտադրությամբ, 2) ձևի փուլը՝ խոսքի և նրա իմաստային հատկանիշների նյութական հենարանը և, վերջապես, 3) մտադրությունների, այսինքն՝ ներգործության փուլը, որ խոսող սուբյեկտը փորձում է առաջ քաշել՝ գիտակցորեն կամ ենթագիտակցորեն, և մեկնաբանության փուլը, որ լսողը հաղորդում է վերջինիս դրդապատճառներին ու նպատակներին: Թարգմանիչները սովորաբար իրենց ուշադրությունը բևեռում են իմաստային փուլին, որը նախորդում է մտադրությունների վերլուծությանը: Ընդ որում, վերոհիշյալ աշխատության մեջ իմաստը սահմանվում է որպես երկու տարրերի՝ մասնակիորեն իրացված իմակային խմբերի և հիշողության մեջ ներառնված ճանաչողական հավելումների ծուլում /Seleskovitch, Lederer, 1984/:

Ըստ վերոհիշյալ ֆրանսիացի թարգմանաբանների՝ մարդկանց միջև հաղորդակցությունը տեղի է ունենում ոչ թե լեզվական միավորների, այլ խոսքային արտահայտությունների՝ որոշակի իմաստ արտահայտող տեքստերի փոխանակմամբ: Թարգմանական այս կաղապարում թարգմանչին վերագրվում է երկու դեր՝ ելակետային տեքստի ընդունող և թարգմանության տեքստի ստեղծող: Այս կաղապարի կարևորագույն օղակն է թարգմանչի կողմից ելակետային ասույթի իմաստի ընկալումը, որն իրականացվում է մեկնաբանության միջոցով: Մեկնաբանությունը տվյալ կաղապարի հիմնական հասկացությունն է, որն առնչվում է ոչ թե լեզվի միավորների, այլ գաղափարների, մտքերի հետ և սովորաբար հաշվի չի առնում միջլեզվական ձևական համապատասխանությունները:

Մեկնաբանությունը ենթադրում է վեր հանել տվյալ իմաստի արտահայտման համապատասխան միջոցը ժամանակի տվյալ պահին և տվյալ համատեքստում, այսինքն՝ բնագիրն ու թարգմանությունը կարող են համընկնել միայն նշված պայմաններում և, իհարկե, պարտադիր չէ, որ դրանք համարժեք լինեն լեզվական ձևի առումով: Իսկ սա նշանակում է, որ թարգմանության ժամանակ թարգմանիչը իմաստն առանձնացնում է իր լեզվական արտահայտությունից, այսինքն՝ տեղի է ունենում հաղորդման ապախոսքայնացում: Դ. Սելեսկովիչի պատկերավոր նկարագրությամբ՝ թարգմանիչը քանդում, առանձին թելերի է վերածում տվյալ լեզվանյութից հյուսված «գործվածքը», իսկ այնուհետև՝ ստացված թելերից հյուսում նոր գործվածք: Մինչ նոր խոսքային արտահայտություն ստեղծելը թարգմանիչը հեղինակի միտքը վերածում է մի մտքի, որ դեռևս չունի լեզվական արտահայտություն: Ընդ որում, դա տեղի է ունենում վայրկենական ներհայեցմամբ, իսկ թարգմանչի հիշողության մեջ պահպանվում է միայն վերհանված իմաստը, որը նոր լեզվական մարմնավորում է ստանում թարգմանության մեջ /Seleskovitch, 1994: 37; Сдобников, Петрова, 2006: 245-248/:

Այսպիսով՝ ինչպես տեսնում ենք, թարգմանության մեկնողական տեսության մեջ կամ, ինչպես երբեմն ասվում է՝ *Իմաստի տեսության* մեջ թարգմանությունը դիտվում է որպես հաղորդակցական ակտ, որի նպատակն է վերարտադրել տեքստի իմաստը և ոչ թե նրա լեզվական միջոցները: Ըստ այս տեսության՝ թարգմանությունը մի մտավոր գործընթաց է, որը սկսվում է տեքստի ընկալումից՝ մի այլ լեզվում այլ լեզվական միջոցներով այն վերարտադրելու համար: Այս առումով՝ թարգմանական գործընթացն ավելի նման է միալեզվյան հաղորդակցության մեջ ընկալման և արտահայտման գործընթացներին և չի դիտվում որպես զուտ համեմատություն լեզուների միջև: Ընդ որում, այստեղ առանձնացվում է երեք փուլ: Առաջին փուլը լեզվական իմաստների և արտալեզվական գիտելիքների ձուլումն է, որից ծագում է իմաստը: Բառի հետ ձուլվող գիտելիքները անվանվում են ճանաչողական լրացումներ, որոնք որոշակի իմաստ են հաղորդում նախադասություններին և օգնում թարգմանչին՝ խուսափելու բառացի վերակողավորման սխալներից: Երկրորդ փուլը ապախոսքայնացումն է, իսկ երրորդը՝ տվյալ իմաստը լեզվական միջոցներով ազատորեն արտահայտելու փուլը:

Իր՝ «Բարելոնից հետո» հայտնի աշխատության մեջ Զ. Սթայները նույնպես թարգմանությունը բնութագրում է որպես մեկնողական գործընթաց /Steiner, 1980/: Միջլեզվական թարգմանության մեջ առկա ցանկացած բաց նա վերագրում է ոչ թե լեզուների միջև եղած տարբերություններին, այլ այն փաստին, որ ամեն մի հաղորդակցություն ենթադրում է նաև փոխըմբռնման քիչ թե շատ բացակայություն: Թարգմանության տեսության մեջ Զ. Սթայների գիրքը կարևորվում է թարգմանական գործընթացի ուսումնասիրության առումով, որտեղ արդեն նկատելի է միջգիտակար-

գային մոտեցումը: Այնուամենայնիվ, այսօր՝ թարգմանաբանության բուռն զարգացման ժամանակաշրջանում, այն կարելի է առավելապես դիտարկել որպես մեկնողական-փիլիսոփայական աշխատություն:

Խոսելով թարգմանության մեկնողական-փիլիսոփայական տեսությունների մասին՝ հարկ է անդրադառնալ նաև իսպանացի թարգմանաբան Է. Օրտեգա Արխոնիլյային: Վերջինս, ելնելով լեզվի մասին փիլիսոփայական խորհրդածություններից, նշում է, որ թագմանիչը բախվում է մի տեսքով, որը ոչ միայն ի ցույց է դնում, այլ նաև լրության մատնում մտադրություններ, ցանկություններ, մշակութային տաբուներ և այլն: Թարգմանության ժամանակ ծագող տարաբնույթ խնդիրներից է, թե արդյոք թարգմանիչը պետք է թիրախ լեզվում հաղորդի այն, ինչ բնագրում հանդես է գալիս «որպես տեքստի ստվեր, որպես քիչ թե շատ պերճախոս լռություն» /Ortega Arjonilla, 1996: 52/:

Թարգմանության մեկնողական տեսություններում կարելի է վիճելի համարել այն միտքը, որ «արտահայտությունը կարող է ծագել ապախոսքայնացված իմաստից և ոչ թե լեզվական տարրերի մանիպուլյացիայից» /Veyrat Rigat, 1998: 30/: Սա, ինչ խոսք, հնարավորություն է տալիս դիտել լեզվական կողավորման և վերակողավորման գործընթացները, սակայն ամենևին էլ ակնհայտ չէ, որ մի այլ լեզվում իմաստի վերարտահայտումը ծագում է մի մտքից, որն արդեն անջատվել է իր լեզվական կերպարանքից: Չէ՞ որ իրական խոսքային ստեղծագործության մեջ լեզուն և մտածողությունը ներդաշնակ ամբողջություն են: Վիճելի է նաև թարգմանական գործունեության տեսական հիմքերի փոխարինումը հաղորդակցության տվյալ իրադրության մեջ ծագող ակնթարթային, անկրկնելի, ներհայեցական իմաստի գաղափարով: Չէ՞ որ յուրաքանչյուր ասույթ, ինչպես միալեզվյան, այնպես էլ երկլեզվյան հաղորդակցության ժամանակ, բացի սուբյեկտիվ և իրադրային իմաստներից, պարունակում է նաև ընդհանուր տեղեկատվություն, որը տվյալ հաղորդակցության ընդհանուր միջուկն է և հնարավոր է դարձնում մարդկային հաղորդակցությունն ընդհանրապես և թարգմանությունը՝ մասնավորապես:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել թարգմանության մեկնողական տեսության որոշ արժանիքներ: Այս տեսությունը կարևորվում է և՛ բանավոր, և՛ գրավոր թարգմանության ժամանակ իմաստաստեղծման գործընթացը ուսումնասիրելիս. լեզվական ձևից «վերանալը», այն է՝ ապախոսքայնացումը, օգնում է նաև հաղթահարել լեզվական փոխներթափանցումները, լեզվական համակարգերի տարբերությունները և թարգմանություններ կատարելիս հիմնվել տվյալ լեզվի նորմերի վրա:

Թարգմանության մեկնողական-փիլիսոփայական տեսություններին է հարում նաև արդի թարգմանաբանության առավել հայտնի ներկայացուցիչներից մեկը՝ Լ. Վենուտին, որը թարգմանությունը քննում է որպես մեկնաբանություն՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ թարգմանելիս արմատապես խզվում է տեքստի կապը տվյալ համա-

տեքստի հետ /Venuti, 2011/: Հաշվի առնելով լեզուների կառուցվածքային տարբերությունները՝ թարգմանիչը կազմաքանդում, վերադասավորում և վերջապես, տեղաշարժում է տեքստակազմիչ նշանակիչների շղթան: Հեղինակն առանձնացնում է սկզբնաղբյուր լեզվի երեք համատեքստ, որոնք չեն պահպանվում թարգմանելիս: Առաջինը ներտեքստային համատեքստն է՝ սկզբնաղբյուր տեքստի հյուսվածքի, նրա լեզվական նորմերի ու խոսքային կառույցների բաղկացուցիչ տարրը: Երկրորդ համատեքստը միջտեքստային է և միջխոսքային, ու նույնպես բաղկացուցիչ տարր, քանի որ պարունակում է լեզվական այն բոլոր կապերն ու հարաբերությունները, որոնց շնորհիվ ելակետային տեքստը սկզբնաղբյուր լեզվում իմաստ է ձեռք բերում: Երրորդը, որը նույնպես սկզբնաղբյուր տեքստի անբաժանելի մասն է, և միաժամանակ միջտեքստային, միջխոսքային և միջնշանային տարր, հաղորդումն ընդունող համատեքստն է: Սակայն սկզբնաղբյուր տեքստը ոչ միայն խզվում է տվյալ համատեքստից, այլ նաև վերստին տեղակայվում մի նոր համատեքստում այն չափով, որ թարգմանիչը այն նորից վերարտադրում է թարգմանության ընթերցողի համար հասկանալի ձևով՝ այն տեղադրելով այլ լեզվամշակութային արժեքների, այլ գրական ավանդույթների և սոցիալական հաստատությունների համատեքստում:

Ելակետային տեքստը վերստին նոր համատեքստում տեղադրելը ենթադրում է այլ միջտեքստային հարաբերությունների հաստատում թարգմանության մեջ և նրանում «ընդունող միջտեքստի» (*intertexto receptor*) առկայություն: Թարգմանության ժամանակ սկզբնաղբյուր տեքստը կրում է իմաստի և ձևի կորուստներ, իսկ թարգմանիչը կարող է այնպիսի մեկնաբանություններ զարգացնել, որոնք ավելի ակնհայտ են դարձնում լեզուների միջև մշակութային տարբերությունները: Որպես օրինակ Լ. Վենուտին քննում է մի ստեղծագործության հին հունարենից լատիներեն թարգմանության ժամանակ թիրախ մշակույթում ի հայտ եկած իրակությունները, ինչպես օրինակ՝ *me carpento vehementem (conduciendo carro)* արտահայտության մեջ սայլի որոշակի տեսակի հիշատակությունը, որը բնորոշ էր միայն ռոմանական կայսրությանը /Venuti, 2011: 167/: Այսպիսով՝ ոչ միայն թարգմանվում են բառեր և արտահայտություններ, այլ նաև՝ հաստատվում մշակութային առումով յուրահատուկ իմաստներ:

Թարգմանչի մեկնաբանությունը կատարվում է մի մշակութային համատեքստում, որտեղ արժեքները, հավատալիքները, ինչպես նաև սոցիալական խմբերը, որոնց հետ վերջիններս զուգորդվում են, ներկայացված են իշխանության և հեղինակության ստորակարգային հարաբերությունների տեսանկյունից: Իսկ մեկնաբանության շնորհիվ հաստատված միջտեքստային հարաբերությունները ազդում են ինչպես սկզբնաղբյուր, այնպես էլ թիրախ տեքստի վրա:

Ըստ Լ. Վենուտիի՝ էթիկական խորհրդածությունը որպես թարգմանական ընդհանրույթ քննարկելու համար հարկ է որդեգրել պատմական

մոտեցում: Հայտնի է, որ ad sensum ռազմավարությունները շատ ազդեցիկ էին և ծնունդ տվեցին թարգմանական այնպիսի ծրագրերի, որոնց արդյունքում ստեղծվեց հսկայական մշակութային ժառանգություն: Սակայն մարդկային սուբյեկտի անհատական՝ ճանաչողական և սոցիալական որակների կարևորման գաղափարը արդի ժամանակներում հարցականի տակ է դնում ad sensum ռազմավարությունները: Որոշ տեսաբաններ և թարգմանիչներ, ինչպես օրինակ՝ Անրի Մեշոնիկը և Անտուան Բերմանը, թարգմանությունը դիտարկում են որպես մշակութային պրակտիկա, որն ունակ է հարգելու օտարալեզու տեքստերի և մշակույթների տարբերությունները, և առաջադրել են խոսքային ռազմավարություններ այս տարբերությունները պահպանելու և արձանագրելու համար /Meschonnic, 2009; Berman, 2014/: Թարգմանությունը զուտ մեկնողական ակտ չէ, այլ նաև ունի տեղայնացնող բնույթ իր մեկնաբանություններում, որը «էթնոկենտրոն բռնություն» կատարելով ոչ միայն կրճատում է օտարալեզու տեքստը, այլ նաև ժամանակավրեպ է հին տեքստերի ժամանակակից փոխադրություններում /Venuti, 2011: 172-173/:

Թարգմանության ապակառուցողական մոտեցումները (Շ.Դերիդա, Մ. Վիդալ Կլարամոնտե) նույնպես դասվում են մեկնողական-փիլիսոփայական կադապարների շարքում: Իսպանական թարգմանաբանական դպրոցում այս տեսության ամենահայտնի ներկայացուցիչը Մ. Վիդալ Կլարամոնտեն է, որի կարծիքով թարգմանության վերաբերյալ ամենավիճելի տեսություններից մեկը ծագում է ժակ Դերիդայի՝ թարգմանության ակտի վերաբերյալ ապակառուցողական խորհրդածություններից: Այստեղ առաջադրվում է նորարարական մոտեցում *բնագիր/թարգմանություն* երկվության վերաբերյալ, որտեղ, ի տարբերություն ավանդական մոտեցումների, բնագիրը ստորադասվում է թարգմանությանը, փորձ է արվում «ի չիք դարձնել» համարժեքության հասկացությունը՝ կարևորելով թարգմանչի մեկնաբանությունները /Vidal Claramonte, 1995: 89/: Այս տեսանկյունից թարգմանությունը սահմանվում է որպես մեկնողական փոխակերպում, որը վեր է հանում բնագրի բազմաթիվ, շատ փոփոխուն, այդ թվում նաև հակասական իմաստները, որի պատճառով թարգմանության հասկացությունը փոխարինվում է *փոխակերպում* (transformación) հասկացությամբ /Vidal Claramonte, 1995: 90-91/: Նման ապակառուցողական տեսություններում թարգմանության խնդիրը դառնում է երկրորդական՝ վերաձվելով փիլիսոփայական՝ ապակառուցողական բնույթի խնդրի. նույնիսկ վիճարկվում է բնագրի էությունը՝ այն համարելով այլ տեքստերի թարգմանություն, ինչպես նաև քիչ նշանակություն է տրվում տեքստի իմաստին՝ առավելապես կարևորելով տեքստի ձևը: Թարգմանության տեքստը գերազանցում է բնագրի տեքստին, աղբյուր տեքստի և թարգմանության տեքստերի միջև սահմաններն այլևս նկատելի չեն, իսկ հավատարմության գաղափարը դիտվում է որպես հնացած հասկացություն, քանզի թարգմանությունը, որպես փոխակերպում, մշտապես «քանդվում է և ի չիք դառնում»:

Ապակառուցողականության հիմքերը հարկ է փնտրել հերմենևտիկայում՝ տեքստերի մեկնաբանության մասին ուսմունքում, նրա փիլիսոփայական հիմունքներում, որտեղ ընդունվում է, որ իմաստը յուրահատուկ է ամեն մի մշակույթում, և հնարավոր չէ այն ճշգրտորեն վերարտադրել այլ մշակույթում: Ամեն լեզու պարփակում է ուրույն լեզվական և մշակութային ինքնություն, որն էլ անհնար է դարձնում թարգմանությունը: Ըստ Օրտեգա ի Գասետի՝ թարգմանությունը ընթերցողին առաջարկում է իր մշակույթին անհարիր և խորթ ինչ-որ բան և «նրան մի պահ զվարճացնում է լինել մի ուրիշը» /Vega, 1994: 308/: Հերմենևտիկայի տեսանկյունից թարգմանությունը մի միջոց է, որը թույլ է տալիս ընթերցողին հասու լինել բնագրին, բայց այն երբեք չի կարող հավակնել նման լինել բնագրին կամ էլ լինել ինչպես բնագիրը: Վալտեր Բենիամինը իր հայտնի «Թարգմանչի առաջադրանքը» էսսեում նույնպես նշում է, որ իմաստը անքակտելի է տվյալ ստեղծագործությունից, և այն թարգմանությունը, որը փորձում է վերակերտել տվյալ ստեղծագործության բովանդակությունը, նախ և առաջ ձև է /Vega, 1994: 285-296/: Թարգմանության մեջ որևէ բան հաղորդելու համար թարգմանիչը պետք է շրջանցի իմաստը, քանի որ այն ներհատուկ է միայն տվյալ ստեղծագործությանը: Այս քառուսում իմաստը մի այլ՝ նախորդ իմաստի վերստեղծումն է, սա էլ իր հերթին՝ մի այլ նախորդի: Նշանների միջև հարաբերությունները ստեղծվում են ժամանակի մեջ. չկա սկիզբ, չկա վերջ, սա մի շրջանաձև շարժում է, որտեղ թարգմանված տեքստը երբեք վերջնականը չէ, որովհետև իր գոյությամբ պարտական է նախորդներին և, այսպես, անորոշ և շարունակական ձևով:

Այս տեսությունը ելնում է սոսուրյան հայտնի նշանակյալ-նշանակիչ երկանդամությունից, ինչպես նաև լեզվական նշանի կամայականության դրույթից: Քանդելով նշանակյալ-նշանակիչ հարաբերությունները նոր նշանակյալ առաջարկելու համար՝ թարգմանությունը աղավաղում է իմաստը: Այս տեսանկյունից թարգմանությունն այլևս վերարտադրություն չէ, այլ վերափոխում:

Այսպիսով, եթե թարգմանության մեկնողական տեսությունները հիմնականում կենտրոնանում են բանավոր թարգմանության ժամանակ իմաստաստեղծման գործընթացի վրա, ապա մեկնողական-փիլիսոփայական տեսությունները, հատկապես արդի հայտնի թարգմանաբան Լ. Վենուտիի աշխատությունները մեծ ներդրում ունեն թարգմանության մշակութային հայեցակերպի, հատկապես թիրախ մշակույթի և թարգմանության փոխհարաբերակցության նորովի մեկնաբանման գործում:

Ի հակադրություն թարգմանության տեքստի թափանցիկության, սահունության և թարգմանչի «անտեսանելիության», որը ձեռք է բերվում թարգմանվող տեքստի մշակութային բաղադրիչների կորստի հաշվին՝ Լ. Վենուտին պահանջում է թարգմանչի «տեսանելիություն»՝ վերջինիս աշխատանքը տեսանելի և թափանցիկ դարձնելու նպատակով: Իսկ սա

ենթադրում է թարգմանությունը դիտարկել որպես մշակույթի վերակառուցում, որպես տարասեռ մի տեքստ, որտեղ ակնհայտորեն դրսևորվում են գաղափարական հակասություններն ու տարբերությունները, սոցիալ-մշակութային և լեզվական կոնֆլիկտները: Լ. Վենուտին թարգմանությունը քննում է որպես «դիմադրության», ինչպես նաև բանակցության և վերապրումի ձև՝ կարևորելով, որ թարգմանությունը պետք է դիտել որպես *թարգմանություն* և ոչ թե գերիշխող գաղափարախոսության կամ իշխանության տեսանկյունից բնական և սովորական շարադրանք: Լ. Վենուտինի կարծիքով թարգմանության արժեքի և նրա ներուժակ ուժի՝ որպես մշակութային և քաղաքական ակտի վերականգնումը, հնարավոր է միայն սահունության և անտեսանելիության գաղափարները հաղթահարելու ճանապարհով, որոնք իրականում մշակութային տարբերությունները միասնականացնում են՝ հիմնվելով թիրախ մշակույթի արժեքների վրա:

Թարգմանության էթիկայի մասին Լ. Վենուտինի սկզբունքները սկիզբ են առել Ֆ. Շլայերմախերի գաղափարներից, որը հակված էր տեքստի օտարականացմանը՝ կարևորելով դրան ներհատուկ ուժը թարգմանության մեջ հաղորդելու գաղափարը: Այս խնդրում առավելապես հարում ենք այն թարգմանաբանների կարծիքին, որոնք գտնում են, որ *օտարականացնելու* և *տնայնացնելու* երկու հակադիր և միաժամանակ փոխլրացնող դիալեկտիկայի միջև իդեալականը միջակա ուղին է, երբ հարգելով օտարը՝ թարգմանությունը ունակ է նաև այն հաղորդել ընդունող մշակույթում:

Ինչ վերաբերում է թարգմանության ապակառուցողական տեսություններին, ապա վերջիններս կարելի է առավելապես բնութագրել որպես փիլիսոփայական խորհրդածություններ, որոնք գրեթե չեն առնչվում թարգմանական բուն գործընթացին՝ չափազանցելով նաև թարգմանության լեզվական և մշակութային «պատնեշները»:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Berman A. La traducción y la letra o el albergue de lo lejano. Buenos Aires: Dedalus, 2014.
2. Delisle J. L'analyse du discours comme méthode de traduction: initiation à la traduction française de textes pragmatiques anglais: théorie et pratique. Ottawa: Éditions de l'Université d'Ottawa, 1980.
3. Meschonnic H. Ética y Política del Traducir (traducción de Hugo Savino). Buenos Aires: Leviatán, 2009.
4. Ortega Arjonilla E. Apuntes para una teoría hermenéutica de la traducción. Málaga: Universidad de Málaga, Servicio de Publicaciones e Intercambio científico, 1996.
5. Seleskovitch D., Lederer M. Interpréter pour traduire. Paris: Didier Érudition, 1984.



6. Seleskovitch D. Interpreting for international conferences: Problems of language and communication. Washington: Pen and Booth, 1994.
7. Steiner G. Después de Babel: Aspectos del lenguaje y la traducción (traducción de Adolfo Castañón). México: Fondo de Cultura económica, 1980.
8. Vega M. Á. Textos clásicos de teoría de la traducción. Madrid: Cátedra, 1994.
9. Venuti L. “La traducción: entre lo universal y lo local” // Tópicos del seminario (25), Puebla, 2011.
10. Veyrat Rigat M. “Bilingüismo, traducción e interpretación de lenguas: aplicación al lenguaje de signos” // LynX. Cuadernos de Trabajo. Serie Alteraciones comunicativas y lenguas especiales. Volumen 19, Valencia: Universitat, 1998.
11. Vidal Caramonte M. Traducción, manipulación, desconstrucción, Salamanca: Ediciones Colegio de España, 1995.
12. Сдобников В. В., Петрова О. В. Теория перевода. М.: АСТ: Восток-Запад, 2006.

**A. БАГДАСАРЯН – *О некоторых современных интерпретативных и интерпретативно-философских теориях перевода.*** – Статья рассматривает некоторые более известные интерпретативные и интерпретативно-философские теории современного переводоведения, в которых перевод преимущественно воспринимается как процесс. Цель статьи – оценить роль этих теорий в развитии новых подходов исследования в современной науке о переводе. Особое внимание уделяется идеям «заметности» переводчика, выдвинутым Л. Венути, которые сегодня стали предметом бурного обсуждения в теории перевода.

**Ключевые слова:** переводоведение, интерпретативная теория, интерпретативно-философская теория, деструктивность, эквивалентность, «незаметность переводчика», культура языка перевода

**H. BAGHDASARYAN – *On Some Contemporary Interpretative and Interpretative-Philosophical Translation Theories.*** – The present paper examines some prominent interpretative and interpretative-philosophical theories of contemporary translation studies, where translation is mainly viewed as a process. The purpose of the paper is to evaluate the role of those theories in the development of contemporary translation thought. A special reference is made to the ideas of the renowned translation theorist L.Venuti on the translator’s “visibility”, which has nowadays become a source of heated discussions in the theory of translation.

**Key words:** translation studies, interpretative theory, interpretative-philosophical theory, destructiveness, equivalence, translator’s invisibility, target culture